# ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՄԵՂ ԶՈՀԵՐԻ

***Ապրիլի 24-ին հարյուրավոր քաղաքացիներ այցելել են Ստեփանակերտի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու 1915 թ. Օսմանյան Թուրքիայի կողմից իրականացված Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին: Հարգանքի տուրք են մատուցել նաև Արցախի պետական համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանը, բուհի պրոֆեսորադասախոսական կազմն ու ուսանողությունը:***

***Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող զանգակատուն-հուշակոթողի մոտ տեղի է ունեցել նաև ոգեկոչման և հոգեհանգստյան արարողություն՝ ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի հանդիսապետությամբ:***

# ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ԵՆ ՄԱՏՈՒՑԵԼ ՄԱՐԱՂԱՅԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

***Ապրիլի 10-ին բանասիրական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ ԱՐՊՀ մի խումբ ուսանողներ իրենց հարգանքի տուրքն են մատուցել Մարաղայի ցեղասպանության զոհերի հիշատակին:***

1992թ. ապրիլի 10-ին ադրբեջանական զինված ուժերը ԼՂՀ Մարտակերտի շրջանի Մարաղա գյուղում իրականացրել են Մարաղայի կոտորածը, որին զոհ է դարձել մոտ հինգ տասնյակ հայ բնակիչ: ԱՐՊՀ մի խումբ ուսանողներ այցելել են Նոր Մարաղա գյուղ և հարգանքի տուրք մատուցել անմեղ զոհերի հիշատակին՝ ծաղիկներ խոնարհելով գյուղում զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողին:

«Այդ արյունալի դեպքերից անցել են 27 երկար ու ձիգ տարիներ, բայց մինչ այսօր այն չի մոռացվել ու չի ստացել իր արժանի գնահատականը: Մենք պարտավոր ենք հիշել բոլորին՝ անուն առ անուն և, միասնական լինելով հանդերձ, լինել մեր երկրի պահանջատերը»,-ասել է բանասիրական ֆակուլտետի ՈՒԽ նախագահ Լիլիթ Մարգարյանը:

# ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 104-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

***Ապրիլի 23-ին ԱՐՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի պատմության ամբիոնի կողմից և ամբիոնի դասախոս, պ.գ.թ., դոցենտ Նունե Սարումյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է ուսանողական գիտաժողով՝ նվիրված Հայոց ցեղասպանության 104-րդ տարելիցին: Գիտաժողովին ներկա էին գիտության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ և ուսանողներ:***

Ֆակուլտետի դեկան, պ.գ.թ. Արմինե Խաչատրյանը, ողջունելով գիտաժողովի ներկաներին, նշել է, որ նման գիտաժողովները ոչ միայն հարգանքի տուրք մատուցելու, պատմական հիշողությունը արթուն պահելու նպատակ ունեն, այլև պատմաբանների կողմից հարցը ուսումնասիրության նոր հարթակի վրա դնելու կարևորություն ունեն:

«Այսօր առաջադիմական երևույթ է, որ խոսում ենք ցեղասպանության դատապարտման, պահանջատիրության, ժխտողական քաղաքականության ծավալման մասին»,- ասել է Նունե Սարումյանը՝ ընդգծելով, որ միջազգային ասպարեզում քննարկվող ամենակարևոր հարցը ցեղասպանության ճանաչումն է, նաև հորդորելով ուսանողներին հայ ժողովրդին ներկայացնել ոչ թե որպես խեղճ, հոգեցունց վիճակ ունեցող, այլ հանդես գալ որպես պահանջատեր և դատապարտող:

Գիտաժողովին մասնակից ուսանողներն իրենց ելույթներում ներկայացրել են Հայոց ցեղասպանության իրագործման դրդապատճառները, միջազգային արձագանքներն ու ճանաչման գործընթացը, ինքնապաշտպանական մարտերը, հայոց ցեղասպանությունը դատապարտող փաստաթղթերը:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից

*Խմբագիր՝ Զարինե Սառաջյան*
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացիր քո համալսարանի մասին:
Այցելիր asu.am կայք:
www.asu.am



# ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 03(217)
ապրիլ, 2019


# ԿԱՅԱՑԵԼ Է ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

***Ապրիլի 5-ին կայացել է ԱՐՊՀ գիտխորհրդի հերթական նիստը, որը մեկնարկել է հաճելի արարողությամբ:***

ԱՐՊՀ և ՊԲ համագործակցության շրջանակում հոգեբանական կենտրոնի նախաձեռնությամբ անցկացված սպա-հոգեբանների հավաքները պատշաճ մակարդակով կազմակերպելու և իրականացնելու համար ԱՀ պաշտպանության նախարարի հրամանով խրախուսվել են ԱՐՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, հոգեբանական կենտրոնի տնօրեն Անահիտ Գասպարյանը, մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Էլլադա Բաղդասարյանը, նույն ամբիոնի դասախոսներ Լուսինե Ղարախանյանը և Արմինե Ավանեսյանը:

Պարգևատրվածներից Վիտյա Յարամիշյանը, խոսելով համագործակցության մասին, նշել է. «Հոգեբանական կենտրոնը մեծ չէ, և մեծ չեն նրա հավակնությունները: Սակայն նախարարության այսպիսի վերաբերմունքը ցույց է տալիս, որ մենք փոքրիկ քայլերով ճիշտ ուղու վրա ենք: Իսկ եթե պաշտպանության նախարարությունը գտնում է, որ պետք է լինի շարունակություն, ապա պիտի փաստենք, որ համագործակցությունը կայացած է»: Բարձր գնահատելով այդ համագործակցությունն ու դրա արդյունքում իրականացվող աշխատանքների արդյունավետությունը՝ ՊԲ բարոյահոգեբանական ապահովման բաժնի պետ, գնդապետ Նորայր Մկրտչյանը շնորհակալություն է հայտնել կատարված աշխատանքի համար՝ ընդգծելով դրանց շարունակականության անհրաժեշտությունը:

ԱՐՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը ևս, կարևորելով փոխգործակցության անհրաժեշտությունը, իր հեղինակած «Ղարաբաղի բարբառը» գիրքը նվիրել է ՊԲ-ին: Հաջորդիվ ռեկտորի կողմից հոբելյանական տարեդարձերի առթիվ և գիտամանկավարժական բազմամյա փորձի համար պատվոգրերով պարգևատրվել են նաև ԱՐՊՀ դասախոսներ Ռուդիկ Առաքելյանը, Արարատ Վարդանյանը, Վոլոդյա Միրզոյանը, Շահեն Այդինյանը, Սիրուն Բաղդասարյանը:

Անցնելով գիտխորհրդի օրակարգային հարցերին՝ ռեկտոր Արմեն Սարգսյանը ներկայացրել է առաջին հարցը, որը վերաբերում էր ԱՐՊՀ ՊՈԱԿ զարգացման ռազմավարական ծրագրի ժամանակացույցը հաստատելուն:

«ԱՐՊՀ զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատվել է գիտխորհրդի նախորդ նիստում, սակայն պահանջ է նաև ծրագրի կատարման քայլերի, ժամանակացույցի և պատասխանատուների հաստատումը»,- նշել է ռեկտորը՝ հավելելով, որ այն ԳԽ հավանությանն արժանանալուց հետո նախատեսվում է բազմացնել և գրքի տեսքով տրամադրել համալսարանի բոլոր ստորաբաժանումներին:

Գործող ուսումնական պլանները (բակալավրիատի ու մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերի) նոր խմբագրությամբ հաստատելու մասին հարցը ներկայացրել է պրոռեկտոր Գեորգի Սահակյանը:

Գիտխորհրդին կից գործող հանձնաժողովների 2018-2019 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի աշխատանքային պլանները ներկայացրել են հանձնաժողովների նախագահները: Գիտխորհուրդը հաստատել է վերոնշյալ հարցերը, երաշխավորել ԱՐՊՀ ՊՈԱԿ «Հայագիտական ուսումնասիրություններ» գիտական հոդվածների ժողովածուն:

# ԱՐՊՀ-ՈՒՄ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ՊԱՏՄԱԲԱՆ, ՑԵՂԱՍՊԱՆԱԳԵՏ ՍՎԱՆՏԵ ԼՈՒՆԴԳՐԵՆԸ

***Արցախի Հանրապետության ՄԻՊ նախաձեռնությամբ ապրիլի 12-ին ԱրՊՀ-ում դասախոսությամբ հանդես է եկել Շվեդիայի Լունդի համալսարանի պրոֆեսոր, պատմաբան, ցեղասպանագետ Սվանտե Լունդգրենը:***

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, ողջունելով բանախոսին, շնորհակալություն է հայտնել նրան՝ Արցախ այցելելու համար և կարևորել հայ-ասորական հարաբերություններին ուղղված նրա ուսումնասիրություններն ու ցեղասպանագիտության բնագավառում ծավալած գործունեությունը: Դասախոսության ընթացքում Սվանտե Լունդգրենը խոսել է ասորիների և հայերի ցեղասպանությունների, սփյուռքի հետ կապերի մասին, ցույց տվել ընդհանրություններն ու տարբերությունները:

Հայտնի ցեղասպանագետն Արցախում առաջին անգամ է և ճանաչողական նպատակից բացի, նաև պատճառներն է հիմնավորել. «Ընկերներիցս շատերն են եղել Արցախում, պատմել ինձ Արցախի մասին: Արցախի պատմությունը, քաղաքականության մեջ ունեցած նրա դերը, հակամարտությունը այն պատճառներն են, որոնք ինձ բերել են այստեղ»:

Խոսելով Արցախի նորագույն շրջանի պատմությունից՝ նա ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ ընթացող բանակցություններում անհրաժեշտ է համարում հաշվի առնել ցեղասպանության հնարավոր սպառնալիքն ու Ադրբեջանի ռազմատենչ հռետորաբանությունը:

«Ես տեսնում եմ Արցախը ցեղասպանության հարացույցում: Բանակցությունների ժամանակ այս փաստը, ինչպես նաև Ադրբեջանի հռետորաբանությունը պետք է հաշվի առնել, որովհետև, եթե նրանց մնար, 90-ականների հակամարտությունը ցեղասպանությամբ կվերջանար»,-նշել է նա:

Խոսելով հայոց ցեղասպանության մասին՝ նա նշել է, որ մոտենում է հերթական տարելիցը, և սա առիթ է, որ աշխարհը դարձյալ խոսի այդ մասին: Նրա խոսքով՝ իրականում շատ երկրներ են արդեն ճանաչել ցեղասպանությունը:

Դասախոսության ընթացքում անդրադառնալով հայերի և ասորիների պատմական ճակատագրի ընդհանրություններին, որոնցից ամենացայտունը ցեղասպանությունն է, ընդգծել է, որ այսօր Շվեդիայի հայկական և ասորական համայնքները բավականին ջերմ հարաբերություններ ունեն և համագործակցում են գրեթե բոլոր ոլորտներում:

Վերջում նա նաև պատասխանել է ներկաների հարցերին՝ շնորհակալություն հայտնելով ԱՀ ՄԻՊ-ին և ԱրՊՀ-ին՝ ջերմ ընդունելության համար:

# ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

***Ապրիլի 2-ին ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները հարգել են ապրիլյան պատերազմի զոհերի հիշատակը՝ ծաղիկներ խոնարհելով ԱրՊՀ զոհված ուսանող ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողին:***

2016 թ. ապրիլին ԱրՊՀ տղա ուսանողները, կիսատ թողնելով ուսումը, մեկ մարդու պես կամավորագրվեցին և մեկնեցին առաջնագիծ՝ պաշտպանելու հայրենիքի սահմանները: Նրանք վերադարձան հերոսացած: Ցավոք, ունեցանք նաև կորուստներ: ԱրՊՀ ուսանողներն այցելել են նաև ապրիլյան զոհերի շիրիմներին, ծաղիկներ խոնարհել՝ հարգանքի տուրք մատուցելով նրանց հիշատակին:

«Մենք հավերժ երախտապարտ ենք մեր հերոսներին: Նրանք, ովքեր բոլորից շատ էին ցանկանում ապրել, բոլորից շատ ունեին երազանքներ: Նրանց մասին հուշերը, նրանց սխրանքը, ազատ հայրենիքի երազանքը ապրում են մեր մեջ, ուրեմն նրանք ապրում են»,-նշել է լրագրություն 2-րդ կուրսի ուսանողուհի Շողեր Սարգսյանը:

ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ուսանող Բենիկ Համբարձումյանը քառօրյայի մասնակիցներից է: Հակառակորդի անօդաչու սարք խոցած ուսանողը ԱՀ Նախագահի կողմից 2016թ. պարգևատրվել է «Արիության համար» մեդալով: Համոզված է, որ եթե հակառակորդը կրկին ոտնձգություն կատարի, կրկին պատրաստ կլինեն նույն խիզախումին.«Ապրիլը սթափեցնող էր և ցույց տվեց, որ վտանգի պահին ազգը միավորվում, դառնում է բանակ, որին անկարելի է հաղթել: Եթե նորից վտանգվի մեր հայրենիքը, պատրաստ ենք նորից մեկնելու առաջնագիծ և պաշտպանելու մեր երկրի սահմանները»:

Բնագիտական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ էդիտա Առստամյանը նշել է, որ այս օրը առիթ է՝ ևս մեկ անգամ հիշելու մեր հերոսներին, արժևորելու նրանց կատարած սխրանքը:

«Ապրողներիս պարտքն է պատերազմի նահատակներին հիշել ամեն օր, ոչ միայն ապրիլի 2-ին: Նրանց հիշելն ու մեծարելը ապրողներին է նախ և առաջ պետք»,-ասել է նա՝ ընդգծելով նման միջոցառումների նշանակության կարևորությունը:



# ԳԻՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

***ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի տնտեսագիտության տեսություն և կառավարում ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Շուշանիկ Ասրյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է գիտական սեմինար՝ ներդրումների մակրոտնտեսական ասպեկտը թեմայով:***

Սեմինարի ընթացքում ուսանողներն իրենց ելույթներում անդրադարձել են այնպիսի թեմաների, ինչպիսիք են ներդրումային համակարգի համաշխարհային փորձը, ներդրումների օրենսդրական կարգավորումը ԱՀ-ում, ներդրումների միկրոտնտեսական և մակրոտնտեսական աղբյուրները, ներդրումների և մակրոտնտեսական ցուցանիշների միջև կապը, ներդրումների սոցիալ-տնտեսական դերը ԱՀ-ում, ազգային տնտեսության անվտանգության վրա ներդրումների ունեցած ազդեցությունը:

Սեմինարին մասնակից ուսանողները կարևորել են նման ձևաչափով գիտելիքներ ստանալու նշանակությունը, իսկ ներկաները գոհունակություն են հայտնել ուսանողների կատարած աշխատանքից, աշխատանքների հիքնուրույնությունից, ցուցաբերած վերլուծական մտածողությունից:

# ԷՆԵՐԳԱԿԻՐՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐԻ ԹԵՄԱ

***Ապրիլի 9-ին ԱրՊՀ աշխարհագրության ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպված գիտական սեմինարի ընթացքում քննարկվել է էներգակիրների շահագործման ազդեցությունը Արցախի Հանրապետության էկոլոգիական իրավիճակի վրա:***

Աշխարհագրության ամբիոնի վարիչ, ա.գ.թ., դոցենտ Անահիտ Գրիգորյանը կարևորել է արդիական խնդիրների ուսումնասիրումն ու ընդգծել, որ աշխարհագրության ամբիոնը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում այդպիսիք:

Ամբիոնի դասախոսներ Վիլեն Սաֆարյանն ու Ռուբինա Թովմասյանը ուսումնասիրել և համալսարանականներին են ներկայացրել քննարկվող նյութի իրավիճակային վերլուծությունը:

«Բնական միջավայրի վրա մարդու հարաճուն ազդեցությունը խախտում է այդ միջավայրի ինքնազարգացման ընթացքը, որը կարող է հանգեցնել միջավայրի քայքայման»,- ասում է Ռ. Թովմասյանը՝ առանձնացնելով ուսումնասիրության տիրույթը՝ անտառաարդյունաբերություն, վառելիքի արդյունաբերություն և հիդրոէներգետիկա:

Արդիական թեմաների շուրջ հրավիրվող սեմինար-քննարկումները ողջունել և այն շարունակական դարձնելու առաջարկով հանդես են եկել ԱրՊՀ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանն ու բնագիտական ֆակուլտետի դեկան Վոլոդյա Միրզոյանը՝ խորհուրդ տալով ընդգրկել նաև հարակից մասնագիտությունների մասնագետների և պատասխանատուների:

# ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ

***Ապրիլի 17-ին ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Նունե Առաքելյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է գրական դատ՝ Իվան Տուրգենևի «Հայրեր և որդիներ» վեպի հիման վրա:***

Ուսանողները վերլուծել, պաշտպանել, քննադատել են վեպի հերոսների արարքները՝ մարմնավորելով դատավորի, դատապաշտպանի, փաստաբանի, վկայի, հայցվորի, պատասխանողի դերերը: Միջոցառմանը մասնակցում էին ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները:

«Գրական դատը հնարավորություն է տալիս ուսանողներին խորությամբ ուսումնասիրելու թեման, ցույց տալու իրենց ցուցաբերած գիտելիքները, տաղանդը»,- ասել է Նունե Առաքելյանը:

Ուսանողուհի Անգելինա Անդրյանը նշել է, որ նմանատիպ գրական դատերը նպաստում են մատուցվող նյութերը ավելի հեշտ ըմբռնելուն:

# ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՓՈՐՁՈՒՍՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԵՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

***ԱրՊՀ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողները, մանկավարժության և հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ, փորձուսուցումն ամփոփել են Ստեփանակերտի Եղիշե Չարենցի անվան համար 7 հիմնական դպրոցում՝ տարրական դասարանների աշակերտների ներգրավմամբ կազմակերպելով Սուրբ Զատկի տոնին նվիրված միջոցառում, որին ներկա էին ԱրՊՀ դասախոսներ, ուսանողներ, ուսուցիչներ, ծնողներ:***

Աշակերտները ներկայացրել են աշխարհի ստեղծման ու Զատկի տոնի վերաբերյալ աստվածաշնչյան պատմությունը, ասմունքել, հանդես եկել երաժշտական, պարային կատարումներով:

«Տարիներ շարունակ ուսանողները փորձուսուցումը անցկացնում են մեր դպրոցում և ամեն անգամ մի նոր բան են թողնում դպրոցին՝ ստանալով լավագույնը, ինչը անհրաժեշտ է հետագայում մանկավարժական գործունեություն ծավալելու համար:

Միշտ էլ հպարտությամբ ենք նշում, որ բուհ-դպրոց համագործակցության շնորհիվ հասնում ենք նմանատիպ հաջողությունների»,- ասել է դպրոցի տնօրեն Անահիտ Պողոսյանը՝ նշելով, որ ուսանողների շնորհիվ աշակերտները նոր գիտելիքներ են ստացել տոնի մասին:

# ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ԱՄՓՈՓԵԼ ԵՆ ՓՈՐՁՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

***ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսներ բաժնի 4-րդ կուրսի ուսանողները ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Եվգենյա Հայրիյանի ղեկավարությամբ նախորդ երկու ամիսների ընթացքում ուսումնական և արտադրական փորձուսուցում են անցել «Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ-ում: Փորձուսուցման արդյունքներն ամփոփվել են կոնֆերանսի ձևաչափով:***

Փորձուսուցման ղեկավար Ե. Հայրիյանը, բացման խոսքում նպատակային և արդյունավետ որակելով ութշաբաթյա փորձուսուցման գործընթացը, իր գոհունակությունն է հայտնել ուսանողներից՝ նշելով, որ վերջիններս առավելագույնս ինտեգրվել են գործընթացին:

«Ուսումնական և արտադրական փորձուսուցումների անմիջական հերթագայությունը հնարավորություն էր նախ ձեռք բերելու գործնական հմտություններ, ապա դրանք անմիջապես կիրառելու գործնականում: Իսկ արդյունքը շոշափելի է»,- ասել է փորձուսուցման ղեկավարը:

Արդյունքը տեղում տեսանելի դարձրեցին ուսանողները, ովքեր միմյանց շարունակելով ներկայացրեցին փորձուսուցման ընթացքում ձեռք բերված հմտություններն ու կարողությունները:

# ԱՐՊՀ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ԿԱՆԱՆՑ՝ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

***ԱրՊՀ արհեստակցական միությունը շնորհավորել է բուհի կին աշխատակիցներին՝ ապրիլի 7-ի՝ մայրության և գեղեցկության տոնի առթիվ:***

«Ապրիլի 7-ին ընդառաջ փորձել ենք հաճելի դարձնել բուհի կին աշխատակիցների առօրյան՝ փոքր-ինչ տոնական տրամադրություն հաղորդելով նրանց առօրյային: Արհմիություն անունը տարիներ շարունակ ասոցացվում էր սոցիալական օգնություն տրամադրող կազմակերպության անվան հետ: Իրականում կառույցը կոչված է նաև այլ առաքելությունների համար: Այս միջոցառմամբ նոր աշխատելաոճի սկիզբ ենք ազդարարում»,-ասել է ԱրՊՀ արհմիության նախագահ Կարեն Մեժլումյանը՝ նշելով մայրության և գեղեցկության տոնի կարևորությունը:

«Հայ կինն օջախի պահապանն է, ընտանիքի հիմնասյունը, հոգատար մայր, գիտնական, պատերազմի դեպքում՝ հայրենիքը պաշտպանող մարտիկ: Կնոջ հանդեպ մարդկության սերն ու պաշտամունքը գալիս է դարերի խորքից: Սակայն, ինչքան էլ կնոջ կերպարը փորձեն ամբողջացնել, դարձյալ ասվածը ամբողջական չի լինի»,-ասել է նա:



# ԱՀ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԱՐՑԱԽԻ ՀԵՐՈՍ ՎԻՏԱԼԻ ԲԱԼԱՍԱՆՅԱՆԸ ԱՐՊՀ-ՈՒՄ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ

***Ապրիլի 3-ին ԱրՊՀ է այցելել ԱՀ անվտանգության խորհրդի քարտուղար, Արցախի հերոս Վիտալի Բալասանյանը և հանդիպում ունեցել համալսարանականների հետ: Հանդիպմանը նա հանդես է եկել բանախոսությամբ՝ անդրադառնալով Արցախի անվտանգությանը, ապրիլյան պատերազմին ու նրա դասերին, քաղաքական զարգացումներին, դարաբաղյան հիմնախնդրին, կրթության ոլորտի խնդիրներին և ներկայացրել իր տեսակետները նշյալ հարցերի վերաբերյալ:***

# ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ԱԺ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՆԻԿՈԼԱՅ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՀԵՏ

***Ապրիլի 12-ին ԱրՊՀ-ում ՀՀ ԱԺ պատգամավոր, իրավաբան Նիկոլայ Բաղդասարյանը հանդիպել է պատմության և իրավագիտության ֆակուլտետի իրավագիտություն մասնագիտությամբ սովորող ուսանողների հետ՝ հանդես գալով «Արդարադատությունը անցումային ժամանակահատվածում» թեմայով դասախոսությամբ:***

Քննարկելով նոր գործիքակազմի ներդրման անհրաժեշտությունը՝ նա ընդգծել է, որ դրա կիրառմամբ հնարավորություն կընձեռվի առավելագույնս արդյունավետ ավարտել անցումային ժամանակահատվածը, որի ընթացքում արդարադատության իրականացումը պետք է ուղղված լինի պահպանելու գործող իրավական համակարգը՝ մարդու իրավունքների պաշտպանության նպատակով:

«Դասընթացի նպատակն է ուսանողներին արդարադատության իրականացման իմաստը փոխանցել, որ մարդիկ տեղյակ լինեն անցումային արդարադատությունից»,-նշել է բանախոսը:

# ԱՐՑԱԽԻ ՔԱՐԵ ՄԱՐԴԱԿԵՐՊ ԿՈԹՈՂՆԵՐԸ՝ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՑՔՈՒՄ

***Ապրիլի 18-ին Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարության «Պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ և ԱրՊՀ համագործակցության շրջանակում պատմություն մասնագիտությամբ սովորող ուսանողների հետ հանդիպել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Նժդեհ Երանյանը և հանդես եկել դասախոսությամբ:***

Նա ներկայացրել է Արցախի քարե մարդակերպ կոթողների հետազոտությունը, 2016-2018թթ. կատարած պեղումները Նոր Կարմիրավանում, ինֆրակարմիր լուսանկարահանման հետազոտության արդյունքները:

«Հնագիտական պեղումները հնարավորություն են տալիս խորությամբ հասկանալու և վերլուծելու Արցախի՝ տվյալ ժամանակաշրջանի մշակույթը, պատմությունը»,- ասել է Նժդեհ Երանյանը՝ ընդգծելով, որ քայլ առ քայլ բացահայտում են քիչ ուսումնասիրված կետերը:

Նժդեհ Երանյանը կարևորել է նման հանդիպումների կազմակերպումը՝ նշելով, որ դա նպաստում է հետագա համագործակցությանը և ուսանողների մասնագիտական գիտելիքները համալրելուն:

# ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ՝ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ

***ԱրՊՀ հիմնադրման առաջին իսկ տարիներից մեծ թափ է հաղորդվել հայագիտական ուսումնասիրություններին, որի զարգացումը խթանելու համար ստեղծվել է ԱրՊՀ հայագիտական կենտրոնը:***

Կենտրոնի գլխավոր առաքելությունն է նպաստել Արցախում հայագիտության զարգացմանը՝ առավել մեծ ուշադրություն հատկացնելով Արցախի պատմական անցյալին և ներկային:Հայագիտական կենտրոնի ղեկավար Նարինե Վարդանյանի խոսքով՝ հայագիտությունը խթանում է անկախ պետականության ամրապնդմանը և նպաստում ազգային ինքնագիտակցության խորացմանը, ազգի հոգևոր, մշակութային վերազարթոնքին, հայեցի դաստիարակությանը և հայրենիքին նվիրված քաղաքացիներ պատրաստելու սուրբ գործին:

ԱրՊՀ հայագիտական կենտրոնը ուսանողների համար պարբերաբար կազմակերպում է փաստավավերագրական ֆիլմերի ցուցադրություն և քննարկում, ուսանողների մասնակցությամբ այցելություններ ԱՀ ՊԲ զորամասեր, ճանաչողական գիտարշավներ, 20-րդ դարի հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչներին նվիրված գիտական ընթերցումներ, գիտաժողովներ:

«Հայագիտական կենտրոնի նպատակն է հայ ժողովրդի պատմության, նրա մասը կազմող Արցախի պատմության, մշակույթի, լեզվաբանության, ազգագրության ուսումնասիրությունը, Արցախի պատմության, զոհված ազատամարտիկների, արցախյան շարժման, բանահյուսության, ազգագրության, բառագիտության, Արցախի գյուղերի պատմության վերաբերյալ նյութերի հավաքագրումը, արխիվային նյութերի ձեռքբերում ԱՀ պետական արխիվից»,- ասել է Նարինե Վարդանյանը՝ նշելով, որ հավաքագրված նյութերը ոչ միայն ուսանողներին են անհրաժեշտ, այլ նաև՝ Արցախի պատմությամբ հետաքրքրվողներին:

Կենտրոնում գործում է հայագիտական ուղղվածությամբ էլեկտրոնային գրադարան, որը համալրվում է նոր գրականությամբ և պարբերականներով:

Կենտրոնը համագործակցում է ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի, Արցախի բարբառի և ազգագրության ուսումնասիրման կենտրոնի և Շուշիի «Կաճառ» գիտական կենտրոնի հետ:

«Առաջիկայում նախատեսում ենք նոր և հետաքրքիր ծրագրեր, որոնք կյանքի կկոչենք ուսանողների հետ համատեղ, և կենտրոնը կհամալրվի հայագիտության վերաբերյալ նոր արդյունավետ նյութերով»,-նշել է կենտրոնի պատասխանատուն:

# ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

***Ապրիլի 15-ից ԱրՊՀ հոգեբանական կենտրոնում մեկնարկել էին հոգեբանական դասընթացները, որը վարում էր ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի փոխդեկան, սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ Անահիտ Սահակյանը: Դասընթացը նախատեսված էր ինչպես ուսանողների, այնպես էլ ոլորտի հոգեբանների, հատուկ և սոցիալական մանկավարժների, հոգեբանությամբ հետաքրքրվող անձանց համար:***

ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, ողջունելով ներկաներին, նշել է, որ համալսարանը շարունակում է իր որդեգրած քաղաքականությունը, որի շրջանակում հրավիրվում են հայաստանյան առաջատար բուհերի մասնագետներ՝ դասախոսություններ անցկացնելու և պրակտիկ գիտելիքներ ձևավորելու համար:

Անահիտ Սահակյանը հանդես է եկել «Սթրեսի կառավարումը» թեմայով՝ ուսանողներին ներկայացնելով սթրեսի նշանակությունը, լարվածությունը հաղթահարելու համար անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը:

«Մեր օրգանիզմը միայն ֆիզիկական գոյությունը չէ, այն նաև պարունակում է հոգեկան առողջությունը, որը առողջ պահելու համար անհրաժեշտ է պարբերաբար «սնվել» պոզիտիվ, դրական էմոցիաներով»,- ասել է նա:

Բանախոսը վերջում ուսանողների հետ անցկացրել է սթրեսի կանխարգելման համար ռելաքսացիոն վարժություններ:



# ԴԱՆԻԱՅԻ ԿՈՊԵՆՀԱԳԵՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

***Ապրիլի 14-ին Դանիայի Կոպենհագենի համալսարանի մի խումբ ուսանողներ այցելել են Արցախի պետական համալսարան: Այցը կազմակերպվել է «International Debate» (միջազգային բանավեճ) կազմակերպության կողմից՝ ապրիլի 12-ից 22-ը նախատեսվող Հայաստան, Արցախ և Վրաստան ուսանողական այցելության շրջանակներում՝ ծանոթանալու տարածաշրջանի երկրների ներքին և արտաքին քաղաքական իրավիճակներին, մշակույթին և պատմությանը:***

«International Debate»-ը Կոպենհագենի համալսարանի քաղաքական գիտությունների բաժնին կից գործող ուսանողական կազմակերպություն է, որի կողմից յուրաքանչյուր տարի կազմակերպվում են միջազգային հարաբերություններին առնչվող 10-15 բանավեճեր և սեմինարներ, ինչպես նաև ուսանողական ուղևորություններ:

Կոպենհագենի համալսարանի 25 հոգուց բաղկացած ուսանողական պատվիրակությունը այսօր հանդիպում է ունեցել ԱրՊՀ ուսանողների հետ, և կազմակերպվել է քննարկում: Հանդիպման ընթացքում երկու բուհերի ուսանողները քննարկել են ուսումնական գործընթացին, ուսանողական կյանքին, ղարաբաղյան հիմնախնդրին, Արցախի երիտասարդության ներգրավվածությունը քաղաքական գործընթացներին, էթնիկ պատկանելությանն առնչվող և մի շարք այլ հարցեր:

Կոպենհագենի համալսարանի քաղաքագիտության բաժնի ուսանող Սիլ Իհոլմը նշում է, որ առաջին անգամն է Արցախում և մինչև Արցախ գալը շատ քիչ տեղեկություններ ուներ Արցախի մասին: Նրա խոսքով՝ այցի ընթացքում նա կհարստացնի իր գիտելիքները Արցախի և ղարաբաղյան հակամարտության մասին. «Մեր այցի նպատակն Արցախ այն է, որպեսզի մենք ավելի խորը հասկանանք ղարաբաղյան հակամարտությունը: Այստեղ ինձ շատ դուր է գալիս: Հուսով եմ, որ կկարողանանք ավելի խորությամբ ուսումնասիրել և կհասկանանք ղարաբաղյան հակամարտության ակունքները»:

«Մենք այստեղ ենք մեր համալսարանի «International Debate» ծրագրի շրջանակներում: Մեր այցի նպատակը նոր գիտելիքներ ստանալն է տարբեր մշակույթների մասին: Երբ վերադառնանք Դանիա, իհարկե, այստեղ ստացած գիտելիքներն ավելի կխորացնենք: Հույս ունենք, որ այստեղ առերեսվելու ենք այնպիսի շքեղ տեսարանների հետ, որոնք դեռ չենք տեսել մեր կյանքում»,-ասել է Կոպենհագենի համալսարանի քաղաքագիտություն բաժնի ուսանող Ֆրեդերիկ Ուիլնդֆիլդը:

# ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ERASMUS+ ՆԱԽԱԳԾԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ GOPLAY ԾՐԱԳՐԻՆ

***ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի թարգմանչական գործ 2-րդ կուրսի ուսանող Վիտալի Պետրոսյանը, անգլերեն լեզու և գրականություն 2-րդ կուրսի ուսանողներ Աննա Մուսայելյանը և Հասմիկ Հակոբյանը մասնակցել են ՀՀ Ծաղկաձոր քաղաքում Erasmus+ նախագծի կողմից կազմակերպած GoPlay ծրագրին: Ծրագրին մասնակցում էին նաև Հայաստանի, Ռուսաստանի, Բելառուսի, Հունգարիայի, Ուկրաինայի, Լեհաստանի, Վրաստանի, Հունաստանի թիմերը:***

Ծրագրի շրջանակում նախատեսված դասընթացները միտված էին ուսանողների մեջ մասնագիտական որակներ ու հմտություններ ձևավորելուն՝ խաղերի ստեղծման և թրեյնինգներ վարելու համար:

«Խնդիր դրվեց, ըստ որի՝ բոլոր մասնակիցները պետք է խաղ ստեղծեն, քանի որ ծրագիրը հենց խաղերի վերաբերյալ էր: Ստեղծեցինք մեր սեփական խաղերը: Հիմա մեր խմբով ունենք մեր խաղը: Այն նախատեսված է 5-ից 8 տարեկան երեխաների համար, ուսուցողական խաղ է, մեկ ամիս հետո արդեն կունենանք խաղի՝ վաճառքի համար նախատեսված օրինակները»,-ասում է թարգմանչական գործ 2-րդ կուրսի ուսանող Վիտալի Պետրոսյանը:

Ծրագրի շրջանակում կազմակերպվել են մրցույթներ, դասախոսություններ՝ խաղերի պատմության և ստեղծման մասին, ֆիլմերի դիտում: Մասնակիցների հաղորդակցման լեզուն անգլերենն էր:

Վերջում մասնակից ուսանողներին շնորհվել են հավաստագրեր, և առաջիկայում ծրագրին մասնակցած ԱրՊՀ ուսանողները պատրաստվում են դասընթացներ կազմակերպել նաև Արցախում:

# ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԲԺԻՇԿ-ՆՅԱՐԴԱԲԱՆ ԱՎԵՏԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

***Ապրիլի 25-ին ԱրՊՀ-ում տարբեր մասնագիտությամբ սովորող ուսանողների հետ հանդիպել է բ.գ.թ., բժիշկ-նյարդաբան, Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման առողջապահական միության նախագահ Ավետիս Ավետիսյանը՝ հանդես գալով «Անձնային աճ» թեմայով դասախոսությամբ: Հանդիպմանը ներկա էին նաև ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ:***

Ըստ բանախոսի՝ յուրաքանչյուր անհատ պետք է փորձի գտնել իր ներսը և հասկանալ իր նպատակները, ակնկալիքները, դեպի ուր է ինքը գնում, ինչ է անում նպատակներին հասնելու համար: «Մենք բոլորս ինքներս պետք է որոշենք մեր քայլերի հաջորդականությունը, ընտրությունները, ձգտումները, ցանկությունները և յուրաքանչյուր մարդ պետք է փնտրի իր գոյության իմաստը, ինչը կօգնի աշխարհը ավելի լավը դարձնելուն»,- ասել է Ավետիս Ավետիսյանը՝ նշելով, որ ժամանակակից մարդը նմանատիպ խորհուրդների և մոտիվացիաների կարիք ունի:

Ուսանողները շնորհակալություն են հայտնել դասախոսության համար՝ կարևորելով նմանատիպ մոտիվացնող հանդիպումների հաճախակի կազմակերպման անհրաժեշտությունը:

# ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ՀՊՄՀ-ՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻՆ

***Ապրիլի 22-ին ՀՊՄՀ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր հանրապետական ուսանողական 1-ին օլիմպիադան, որին մասնակցություն են ունեցել նաև ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն, անգլերեն լեզու և գրականություն մասնագիտությունների ուսանողներ:***

Անգլերեն, գերմաներեն, ռուսերեն առարկաների գծով կազմակերպված օլիմպիադային մասնակցել ենբակալավրիատի 1-2-րդ կուրսերի 78 ուսանող՝ Երևանից, Վանաձորից, Արցախից, Բուդապեշտից:

Օլիմպիադայի գնահատման հանձնաժողովը գոհունակություն է հայտնել մասնակիցների ցուցաբերած արդյունքներից: Ամենաբարձր՝ 20 միավորը վաստակել է Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի պատմության ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող Պետեր Քիշինը:

Իսկ ԱրՊՀ անգլերեն լեզու և գրականություն 2-րդ կուրսի ուսանողուհի Իրենա Թովմասյանը, ռուսաց լեզու և գրականություն 2-րդ կուրսի ուսանողուհի Քրիստինե Ջալալյանը օլիմպիադայում զբաղեցրել են 3-րդ մրցանակային տեղը:

Մրցանակային տեղ զբաղեցրած 18 ուսանողներին հանձնվել են մրցանակներ, մասնակիցներին՝ հավաստագրեր:

Օլիմպիադային մասնակցած ԱրՊՀ ուսանողները գոհունակություն են հայտնել կազմակերպիչներից՝ կարևորելով նման օլիմպիադաներին մասնակցելու անհրաժեշտությունը ուսումնագիտական գործընթացի արդյունավետության և ուսանողների մոտիվացիայի բարձրացման գործում:

# ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՋԱՀԵՐԹ ԵՎ ՄՈՄԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ

***Ապրիլի 23-ի երեկոյան Ստեփանակերտում տեղի է ունեցել ջահերթ և մոմավառություն՝ ի հիշատակ 1915 թ. հայոց ցեղասպանության անմեղ զոհերի: Ջահերթը մեկնարկել է Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցու բակից դեպի հուշահամալիր: «ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ ՀԱՆՈՒՆ ՀԱՅ ԴԱՏԻ» կարգախոսով երթին մասնակցել են նաև ԱրՊՀ ուսանողներ:***

# «ՄԵՐ ԳԵՐԽՆԴԻՐԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՄՐԱՊՆԴՎԵԼՆ Է». ՀՐԱՆՏ ԲԱԳՐԱՏՅԱՆ

***Ապրիլի 17-ին ԱրՊՀ է այցելել և դասախոսությամբ հանդես եկել տնտեսագիտության դոկտոր Հրանտ Բագրատյանը: Ողջունելով բանախոսին՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել նրան ԱրՊՀ այցելելու համար և կարևորել ոչ ֆորմալ կրթության ձևաչափը՝ որպես ուսանողներին գիտելիք տալու այլընտրանքային հարթակ: Դասախոսությանը մասնակցում էին տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողներ և դասախոսներ:***

Հանդես գալով «Գլոբալ մարտահրավերները և Հայաստանը» թեմայով դասախոսությամբ՝ բանախոսը մասնավորապես անդրադարձել է քաղաքակրթություններին և դրանց տեսակներին, աշխարհաքաղաքականությանը, աշխարհաքաղաքականացման և տարածաշրջանային կապերին, արտագաղթին և ներգաղթին, ՓՄՁ-ներին, կրթության, գիտության և տեխնոլոգիաների զարգացմանը, հարկային քաղաքականությանը:

«Մենք պետք է նայենք, տեսնենք, թե ինչպես է կառավարվում աշխարհը, այնպես էլ կառավարվենք: Չնայած տարբեր նկրտումների՝ իրատեսականն այն է, որ որտեղ բնակչություն կա, այդ բնակեցված տարածքները երբևիցե ոչ մեկին չզիջել: Մեգաէկոնոմիկայի ժամանակ ռեսուրսները այնպես են իրար ուղղվում, որ որտեղ ազատ տարածք լինի, վաղ թե ուշ այն բնակեցվելու է այլ ազգերի ներկայացուցիչներով: Մեր գերխնդիրը Ղարաբաղի ամրապնդվելն է, այս հայկական տարածքները մեր ազգի ներկայացուցիչներով բնակեցնելը»,-ասել է Հ. Բագրատյանը և ընդգծել, որ գլոբալ մարտահրավերներին դիմակայելու համար նախ պետք է հստակեցնել, թե մենք ինչ ենք ուզում և դեպի ուր ենք գնում:

«Աշխարհից մի բան ուզելուց առաջ պետք է այդ աշխարհին կարողանաս ինչ-որ բան տալ»,- ասել է նա՝ մեգաէկոնոմիկայի համատեքստում մատնանշելով առկա խնդիրները և ընդհանրացրել, որ ստեղծված որոշ ինստիտուտներ շատ հեռու են միջազգային չափանիշներից: Խոսելով խնդիրներից՝ բանախոսն առաջ է քաշել դրանց լուծման կոմպլեքս մոտեցումը և հորդորել անհրաժեշտ երազանքների դաշտից տեղափոխվել իրականություն՝ ձգտումները մոտեցնելով իրատեսական հնարավորություններին:

Վերջում բանախոսը պատասխանել է ուսանողների և դասախոսների հարցերին:

# ԱՐՊՀ-ՈՒՄ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ՍՈՑԻՈԼՈԳ ԷՌՆԵՍՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

***Ապրիլի 16-ին ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի ուսանողների հետ հանդիպել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դասախոս, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էռնեստ Գրիգորյանը և հանդես եկել դասախոսությամբ:***

Բանախոսն ուսանողների հետ քննարկել է միջազգային կյանքի նոր փոփոխությունները, նոր սպառնալիքների՝ 3-րդ համաշխարհային պատերազմ սկսելու վտանգը, որոնք անմիջական ազդեցություն ունեն մարդկանց վրա, ինչպես նաև, հաշվի առնելով նշանավոր գիտնականների կարծիքները վերոնշյալ խնդիրների շուրջ, քննարկման միջոցով մատնանշել այդ վտանգի դեմ պայքարելու ուղիները:

«Որպես սոցիոլոգ՝ կազմել եմ գրադարան՝ընտրելով ու տարանջատելով ուսանողների համար կարևոր ու պիտանի նյութերը, հնարավորություն տալով նրանց, որ խուսափեն համացանցում տարածված ապատեղեկատվությունից, ինչը մեծ նշանակություն կարող է ունենալ ապագա մասնագետների համար», -ասել է Էռնեստ Գրիգորյանը:

# «ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅ, ԱՅՑԵԼԵԼՈՎ ԱՐՑԱԽ, ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ Է ԻՐԱԿԱՆԱՑԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԶԱՆՔԻՆ». ԴԱՎԻԹ ՄՈՒՐԱԴՅԱՆ

***Ոչ ֆորմալ կրթության ծրագրի շրջանակներում ապրիլի 12-ին ԱՐՊՀ-ում դասախոսությամբ հանդես է եկել գրող, կինոգետ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Դավիթ Մուրադյանը:***

Նախքան դասախոսության մեկնարկը՝ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել ծրագրի համակարգողներին և բանախոսին՝ հերթական անգամ մայր բուհում լինելու և դասախոսությամբ հանդես գալու համար:

«Արվեստը՝ որպես ազգային երազանք» թեմայով դասախոսության ընթացքում Դ.Մուրադյանն անդրադարձել է հայ մշակույթի պատմությանն ու ազգային մշակույթի նշանավոր գործիչներին, արվեստի դերին պետականության զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:

Խոսելով Արցախի մասին՝ նա նշել է, որ յուրաքանչյուր հայ, այցելելով Արցախ, առաջին հերթին հանդիպում է իրականացած ազգային երազանքին՝ հավելելով, որ այդ երազանքի իրականացմանը նպաստել է նաև արվեստը:

«Արվեստը սովորականի հաղթահարումն է և գեղեցիկի որոնումը, որովհետև հաճախ կյանքն իր ընթացքի մեջ բնավ էլ գեղեցիկ չէ: Գեղեցիկը առեղծվածն է, մինչև վերջ չվերծանվածը»,- այսպես է սահմանում արվեստը Դ. Մուրադյանը:

Իբրև մշակութային հուշարձաններ՝ բանախոսն առանձնացրել է հայ ժողովրդական հեքիաթներն ու էպոսը, դրանք մեկնաբանել ազգային երազանքի տեսանկյունից: «Հեքիաթ պատմելիս հայ ժողովուրդը բռնել է գեղարվեստականության բանալին. լինում է, չի լինում... երազանքի և երևակայության զուգադրմամբ գեղարվեստական փիլիսոփայական այս խտացմամբ ամբողջանում է մի ողջ ժողովրդի ազգային երազը»,-նշել է նա՝ հավելելով, որ հայ ժողովրդի երազանքների խտացման բարձրակետը հայոց էպոսն է:

Վերջում բանախոսը պատասխանել է ներկաների հարցերին:

# ՎԱՐՊԵՏԱՑ ԴԱՍԵՐ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆՈՒՄ

***ԱՐՊՀ հրավերով ապրիլի 15-ից 19-ը լրագրության բաժնում վարպետաց դասերով հանդես է գալիս լրագրող և մեդիափորձագետ Մեսրոպ Հարությունյանը:***

Հնգօրյա դասընթացների ծրագրում ներառված են թեմաներ, որոնք առնչվում են մամուլի տեսությանն ու պատմությանը, ԶԼՄ օրենսդրությանն ու էթիկային: Տեսականի համեմատ մեծ ժամաքանակ է հատկացված գործնական առաջադրանքներին:

Մ. Հարությունյանը երկրորդ անգամ է դասընթաց վարում ԱՐՊՀ-ում: Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Շուշան Ասկարյանը, խոսելով պարբերական դարձած դասընթացների մասին, կարևորում է ոչ միայն շփումներն ու փորձի փոխանակումը. «Դասապրոցեսում միշտ չէ, որ գործնականին նախապատվություն տալու հնարավորություն ենք ունենում: Անթաքույց պիտի ասեմ, որ տեսականը գերիշխում է,- ասում է նա,- բացը փորձում ենք լրացնել նաև կրթության ոչ ֆորմալ ձևաչափերի ընտրությամբ»:

Դասընթացի մասնակիցներից առաջին կուրսի ուսանողուհի Սիրանուշ Ադամյանը ևս կարևորում է փորձառուների հետ շփումը. «Այսպիսի դասընթացները հնարավորություն են տալիս ամրապնդելու մեր մասնագիտական գիտելիքները: Մ. Հարությունյանի կողմից վարվող արդյունավետ դասերի ընթացքում մենք ձեռք ենք բերում հմտություններ, որոնք,համոզված եմ, կնպաստեն մեր մասնագիտական ապագա գործունեությանը»:



# ԱՐՊՀ-ՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

***Տարին թումանյանական է, ինչը խոսում է այն մասին, որ ողջ տարվա ընթացքում բանաստեղծին նվիրված միջոցառումների պակաս չի լինելու: Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակի տոնակատարություններից անմասն չի մնում ԱՐՊՀ-ն: Թումանյանական հերթական միջոցառումը նախաձեռնել է գրականության և լրագրության ամբիոնի դասախոս, բ.գ.թ. Զարինե Սառաջյանը՝ «Թումանյանական ընթերցումներ» խորագրով:***

Ողջունելով Ամենայն հայոց բանաստեղծին նվիրված հերթական միջոցառման նախաձեռնությունը՝ ԱՐՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել կազմակերպիչներին և մասնակիցներին՝ աշխատաժողովի աշխատանքներին մաղթելով արդյունավետ ընթացք:

Կան գրողներ, որոնք ուղեկցում են կյանքի որոշակի շրջափուլում, սակայն Հովհ. Թումանյանն այն գրողն է, որն ընթերցողին ուղեկցում է կյանքի բոլոր շրջափուլերում՝ մանկությունից մինչև խոր ծերություն.այսպես է մտորում հայ ժողովրդի ազնիվ կենսագրի մասին Զ. Սառաջյանը:

«Թումանյանով մենք ճանաչում ենք մանկության հրաշք մոլորակը, բացում հեքիաթային աշխարհի փակ դռները, Թումանյանի հետ սիրահարվում ենք, Թումանյանի հետ տառապում, Թումանյանի հետ իմաստնանում և սովորում լինել լավատես: Նրա պատգամներն այսօր էլ արդիական են և մղում են ընթերցողին լինել հումանիստ, կենսասեր, հայրենասեր և ունենալ ամուր ազգային, հոգևոր արժեհամակարգ»,- նկատում է կազմակերպիչը:

Ընթերցումներին մասնակցող գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դասախոսական կազմի և բաժնի մագիստրանտների Հովհ. Թումանյանի կյանքին և գործին նվիրված ելույթներում ու զեկուցումներում ամբողջացվեց Թումանյան մարդը, մտածողը, գրողը, քաղաքական գործիչը, արվեստի տեսաբանն ու հրապարակախոսը:

«Մեծերի հետ կապված իրողությունների նշանավորումը ոչ միայն հարգանքի տուրք է, այլև նրանց կյանքն ու գործը էլ ավելի խորությամբ ուսումնասիրելու, արժևորելու, ճանաչելի դարձնելու, դասեր առնելու պարտավորություն, հատկապես՝ երբ դա վերաբերում է ազգային հնչեղություն ունեցող անհատներին»,- ընդհանրացնում է գրականության և լրագրության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ Շուշան Խաչատրյանը:

Ելույթներով հանդես են եկել բ.գ.դ., պրոֆեսոր Սոկրատ Խանյանը՝ «Հովհաննես Թումանյանը և Արցախը», բ.գ.թ.,պրոֆեսոր Անահիտ Աթայանը՝ «Հովհաննես Թումանյանը և մանկական գրականությունը», բ.գ.թ., դոցենտ Զինաիդա Բալայանը՝ «Պատմության փիլիսոփայությունը «Թագավորն ու չարչին» բալլադում», բ.գ.թ. Վալյա Առաքելյանը՝ «Հովհաննես Թումանյանի քառյակները», բ.գ.թ. Տաթև Սողոմոնյանը՝ «Հայրենիքի թեման Հովհաննես Թումանյանի պոետական աշխարհում» թեմաներով: Ուսանողները ևս հանդես են եկել զեկուցումներով:

# ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՑԵՐԵԿՈՒՅԹ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

***Ապրիլի 9-ին ԱՐՊՀ բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, մ.գ.թ., դոցենտ Ինգա Հակոբյանը կազմակերպել է գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված մայրության և գեղեցկության տոնին:***

«Պատահական չէ, որ տոնը համընկնում է գարնան գալստյան, բնության զարթոնքի հետ, որը խորհրդանշում է նաև կանանց, մայրերի գեղեցկությունն ու բարությունը, կյանքը գունավորելու և նոր լիցքեր հաղորդելու նրանց կարողությունը»,-ասել է Ի. Հակոբյանը՝ մաղթելով բոլոր կանանց, մայրերին, աղջիկներին ընտանեկան ջերմություն, երջանկություն, սեր և խաղաղություն:

Ուսանողներն ասմունքել են, հանդես եկել պարային կատարումներով, արժևորել կանանց անգնահատելի դերը մատաղ սերնդի դաստիարակության, կրթության գործում:

# ԱՐՊՀ-Ն ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄ Է ԱՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ

***ԱՐՊՀ-ԱՀ ազգային վիճակագրական ծառայություն համագործակցության շրջանակներում պարբերաբար ԱՎԾ մասնագետները արդիական թեմաների շուրջ դասախոսությամբ հանդես են գալիս ԱՐՊՀ-ում, ուսանողներն են այցելում ԱՎԾ, ծանոթանում ծառայության կողմից իրականացվող աշխատանքներին: Ապրիլի 10-ին տնտեսագիտության ֆակուլտետում այս անգամ դասախոսությամբ հանդես է եկել ծառայության աշխատակից, ԱՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Իրինա Ավանեսյանը:***

ԱՎԾ ներկայացուցիչը ներկայացրել է մի քանի տարվա կտրվածքով համանուն ցուցանիշների ընդհանրություններն ու տարբերությունները, հիմնավորել դրանց աճման և նվազման տեմպերը: